ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/166

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20465-18 գրությամբ «ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00105084/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-8969 գրության հիման վրա, 09.11.2018թ. նախաձեռնել է «ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-8969 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացնում ենք Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արթուր Եղիազարյանը:

3. <u>«ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ն 22.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

« Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

«ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ից 3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից

տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մերժվել է և նույն չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/:

Իսկ www.gnumner.am համացանցային կայքում 03.09.2018թ. հրապարակված մեկ այլ՝ թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է և 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մանե Վուդ» ՍՊԸ-ն:

04.09.2018թ. «Մանե Վուդ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պահանջել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը: Սակայն նշված ծանուցումը տեխնիկական խնդիրների պատճառով չի բացվել Ընկերության մոտ, և փաստացիորեն «Մանե Վուդ» ՍՊԸ-ն չի կարողացել ծանոթանալ նամակի բովանդակությանը:

Ընկերությունը՝ չկողմնորոշվելով իրարամերժ թիվ 3 արձանագրությունների տարբեր բովանդակություններից, 04.09.2018թ. նորից մուտք է գործել www.gnumner.am համացանցային կայք, որտեղ 04.09.2018թ. հրապարակվել է լրացված թիվ 3 արձանագրություն, որտեղ չկա որևէ կետ, որում արձանագրված կլիներ, որ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում երրորդ անգամ հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ.տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը, որից նոր Ընկերությունը տեղեկացել է, որ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ելնելով վերոգրյալից՝ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն 10.09.2018թ. (սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել որակավորման փաստաթղթերը և ուղեկցական գրությամբ հայտնել, որ ունենալով ծրագրային և դոմեյնի /domain/ հետ կապված խնդիրներ՝ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն չի կարողացել մուտք գործել իր էլեկտրոնային փոստ և ծանոթանալ ծանուցման

բովանդակությանը և միայն ուշացումով ծանոթանալով գրությանը՝ 1 օր ուշացումով ներկայացրել է որակավորման փաստաթղթերը:

«Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն 10.09.2018թ. թիվ 4 արձանագրությամբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիման վրա Պատվիրատուն պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ՖՆ, այնուհետև ստանալով պարզաբանումը՝ անհրաժեշտություն է առաջացել պարզաբանումը ուսումնասիրելու նպատակով կասեցնել նիստը ևս 5 օրով, ինչից հետո «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.10.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ որոշել է հաջորդ նիստը նշանակել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած համապատասխան որոշման հրապարակման հաջորդող աշխատանքային օրը:

06.11.2018թ.(այսինքն երկու ամիս անց) տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը նոր գնահատել է «Մանե Վուդ» ՍՊԸ-ի վարքագիծը և արձանագրել է հետևյալը. «Մանե Վուդ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Վերոհիշյալի հիման վրա որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժել՝ ընթացակարագի 1-ին չափաբաժնի մասով:

Այնուհետև, նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն ներկայացրել են որակավորման փաստաթղթերը:

Սակայն նույն արձանագրության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած համապատասխան որոշման հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշեց անփոփոխ թողնել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին բոլոր նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը և վերջինիս ճանաչել հաղթող մասնակից:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. տեղի ունեցած նիստի երեք օրինակ թիվ 3 արձանագրություններ, որոնք պարունակում են իրարամերժ տեղեկատվություն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասով:

«Մանե Վուդ» ՍՊԸ-ն չի կարողացել ծանոթանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2018թ. ուղարկված ծանուցմանը, քանի որ էլեկտրոնային հասցեն և համապատասխանաբար ծանուցումը տեխնիկական խնդիրների պատճառով չեն բացվել Ընկերության մոտ:

Ընկերությունը նորից մուտք է գործել www.gnumner.am համացանցային կայք, որտեղ 04.09.2018թ. հրապարակվել է լրացված թիվ 3 արձանագրություն, որտեղ չկա որևէ կետ, որում արձանագրված կլիներ, որ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում երրորդ անգամ հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ.տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը, որից նոր Ընկերությունը տեղեկացել է, որ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ելնելով վերոգրյալից՝ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն 10.09.2018թ. (սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել որակավորման փաստաթղթերը և կից գրությամբ հայտնել, որ ունենալով ծրագրային և դոմեյնի /domain/ հետ կապված խնդիրներ՝ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն չի կարողացել մուտք գործել իր էլեկտրոնային փոստ և ծանոթանալ ծանուցման բովանդակությանը և միայն ուշացումով ծանոթանալով գրությանը 1 օր ուշացումով ներկայացրել է որակավորման փաստաթղթերը:

Նշված գործողությունից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հերթական նիստը նշանակվել է 06.11.2018թ.-ին՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած որոշման հրապարակումից հետո:

Վերոնշյալ որոշմամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ պարտավորեցնել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած համապատասխան որոշման հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշեց անփոփոխ թողնել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին բոլոր նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը և վերջինիս ճանաչել հաղթող մասնակից:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին բոլոր նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող

մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը անփոփոխ թողնելու մասին որոշում կայացնելու պայմաններում, դրա հետ միաժամանակ պետք է ոչ թե գնահատվեր «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ և «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը կամ դրանց ներկայացման փաստը, այլ դադարեցվեր համապատասխան չափաբաժիններով «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ին և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին, ինչպես նաև «Մանե Վուդ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները և համապատասխանաբար արդեն ուժի մեջ չէր լինի վերջիններից որակավորման փաստաղթեր ներկայացնելու պահանջի մասին որոշումը: Վերոհիշյալի արդյունքում չէր արձանագրվի «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից 1 օր ուշացումով որակավորման փաստաթղթերը ներկայացնելու հանգամանքը:

Սակայն, եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է այլ սկզբունքով, այն է՝ գնահատել «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ և «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը ներկայացնելու հանգամանքը, այնուհետև կատարել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի իրավապարտադիր որոշումը, ապա այս պարագայում խնդրում եմ հաշվի առնել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է որակավորման փաստաթղթերը՝ ուստի այս պարագայում պետք էր գնահատվեր ներկայացված փաստաթղթերը և եթե արդյունքում արձանագրվեր, որ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին՝ ճանաչվեր ընտրված մասնակից:

Խնդրում ենք «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակումստանձ-նածպարտավորությանխախտում թույլ տալու փաստը գնահատել այս փաստերի համադրմամբ, և հաշվի առնել, որ փաստաթղթերը անգամ սահմանված ժամկետում ներկայացնելու և բավարար գնահատելու արդյունքում «Մանե Վուդ» ՍՊԸ-ն ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ իրավասությունը որոշման պայմաններում չէր ճանաչվելու հաղթող մասնակից:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստարկները և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների և պահանջների հետևանքով «Մանե Վուդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրակացությունը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20465-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ դատական դեպարտամենտի 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-8969 գրությունը, «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.08.2018թ. նիստի թիվ 2, 03.09.2018թ. նիստի թիվ 3 և 03.09.2018թ. նիստի թիվ 3 /լրամշակված/, 10.09.2018թ. նիստի թիվ 4, 17.09.2018թ. նիստի թիվ 5 և 06.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությունները, «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը, «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» նանագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Մանե Վուդ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ

չափաբաժինների մասով, ինչպես նաև «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն և «[illegible]-2014» և «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումը:

«Մանե Վուդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-1[illegible]/40» ծածկագրով գնանշման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 28.07.2018թ. ժամը 12:00 նիստի թիվ 2 արձանագրության՝

- 5-րդ կետի համաձայն՝ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է՝ համապատասխանաբար 7,[illegible],330 ՀՀ դրամ, 6,250,710 ՀՀ դրամ և 8,307,690 ՀՀ դրամ գնային առաջարկները (ներառյալ ԱԱՀ):
- 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն ճանաչել Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ից 3-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 03.09.2018թ. ժամը 12:00 նիստի թիվ 2 արձանագրության (www.gnumner.am կայքում հրապարակվել է ժամը 14:02:59-ին) 2-րդ կետով արձանագրել է, որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ [illegible] ժամկետանց հարկային պարտավորություն, և նույն արձանագրության 3-րդ կետով որոշել է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ից 3-րդ չափաբաժինների մասով մերժել, և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մանե Վուդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

04.09.2018թ. Հանձնաժողովը հրապարակել է 03.09.2018թ. ժամը 12:00 նիստի թիվ 3 լրամշակված արձանագրությունը (www.gnumner.am կայքում հրապարակվել է 04.09.2018թ. ժամը 15:10:08-ին), որի 3-րդ կետով որոշել է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մերժել, և նույն չափաբաժինների մասով առաջին տեղ

զբաղեցրած մասնակից ճանաչել «Ստանդարտ-2014» և «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումին:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում (04.09.2018թ. ժամը 17:00:31-ին)՝ երրորդ անգամ հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, որի 3-րդ կետով հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մանե Վուդ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով: Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մնացած տեղերը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 07.09.2018թ. ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ 04.09.2018թ. Հանձնաժողովի որոշմամբ՝ թիվ ԴԴ-3-Ե-6921 գրությամբ վերջինս ճանաչվել է «Մանե Վուդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, սակայն Ընկերությունն ունենալով տեխնիկական բնույթի խնդիր, չի կարողացել ժամանակին մուտք գործել էլեկտրոնային գնումների համակարգ՝ նշված ծանուցման բովանդակությանը: Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է Հրավերով պահանջված փաստաթղթերն ընդունել 10.09.2018թ.:

Հանձնաժողովի 10.09.2018թ. թիվ 4 արձանագրության համաձայն «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիման վրա հնարավոր է դարձել պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությունից հետո, նշված պարզաբանումն ուսումնասիրելու նպատակով՝ Հանձնաժողովը հայտարարվել է նիստը 5 օրով:

«Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն՝ Ընկերության հայտը մերժելու որոշումը դադարեցնելու պահանջով, բողոք է ներկայացրել Բողոքներ քննող անձին, որի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.10.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է Հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել ՀՀ գնումների մասին օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Բողոքներ քննող անձի կողմից կայացրած համապատասխան որոշման հրապարակման հաջորդող աշխատանքային օրը:

Բողոքներ քննող անձը բավարարել է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի [illegible]ից ներկայացված բողոքը, և որոշում է կայացրել պարտավորեցնել «ԳՈՀԱՊՈՐԾ-18/40» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

Հանձնաժողովի 06.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրության 1-ին [illegible]ով արձանագրել է, որ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը, և հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-[illegible] է Ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժել:

Նույն արձանագրության 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ Բողոքներ քննող անձի կողմից կայացրած համապատասխան որոշման հիման վրա Հանձնաժողովը որոշել է անփոփոխ թողնել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին 1-ից 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը և վերջինիս ճանաչել ընտրյալ մասնակից:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի [illegible]ի ժամանակ «Մանե Վուդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ www.[illegible]ում հրապարակվել են երեք իրարամերժ թիվ 3 արձանագրություններ [illegible]ված տարբերակներ/, որոնցից առաջինի՝ 03.09.2018թ. թիվ 3 արձանագրությունն, «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու [illegible] 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մանե Վուդ» ՍՊԸ-ն, 04.09.2018թ. հրապարակված լրամշակված թիվ 3 արձանագրության մեջ ընդհանրապես չի եղել որևէ կետ, որով արձանագրված կլիներ, որ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, և միայն www.[illegible]ում 04.09.2018թ. երրորդ անգամ հրապարակված Ընթացակարգի Հանձնաժողովի 03.09.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունից [illegible]ել է, որ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 04.09.2018թ. «Մանե Վուդ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ Հանձնաժողովը պահանջել է ներկայացնել [illegible]ան

փաստաթղթերը, սակայն, Ընկերության ներկայացուցչի՝ խոսքով, նրանց ծանուցումը տեխնիկական խնդիրների պատճառով Ընկերության կողմից չի բացվել և վերինը չի կարողացել ծանոթանալ ծանուցման բովանդակությանը, ինչի հետևանքով «Մանե Վուդ» ՍՊԸ-ն 10.09.2018թ. (սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը) է ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին բոլոր նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու պայմաններում, չպետք է գնահատվեր «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը կամ դրանց ներկայացման փաստը, այլ պետք է դադարեցվեր «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման արդյունքում կայացված՝ համապատասխան չափաբաժնով «Մանե Վուդ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, ինչպես նաև դրանից բխող՝ մասնակցից որակավորման փաստաթղթեր պահանջելու մասին որոշումները, ինչի արդյունքում չէր արձանագրվի «Մանե Վուդ» ՍՊԸ-ի կողմից մեկ օր ուշացումով որակավորման փաստաթղթերը ներկայացնելու հանգամանքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ մասնակցի հայտը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն կարգով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխա[illegible]րգի

միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հրավերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 8.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմնավորմամբ գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումներ իրականացնող բոլոր պատվիրատուներին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես կեղծ, մասնակիցը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը հանդիսանում է գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակցություն ընդունվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների կողմից եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից դրանց միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարգավիճակը ընկալելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար հաջորդները զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման տվյալներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովի որոշմամբ «Մանե Վուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է մրցույթին 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին, սակայն Հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը Հանձնաժողովին է ներկայացրել վերջինիս կողմից սահմանված ժամկետից ուշ՝ 10.09.2018թ.:

- 04.09.2018թ. հրապարակված՝ լրամշակված թիվ 3 արձանագրությամբ «Մանե Վուդ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու փաստաթուղթն չի ստորագրվել:

- ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված համապատասխան որոշմամբ՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին 1-ին 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. թվագրված 2

արձանագրությամբ կայացրած որոշումը թողնվել է անփոփոխ և վերջինս ճանաչվել հաղթող մասնակից:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 06.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Արգավանդ Կախույց» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ից 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին 28.08.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը թողնել անփոփոխ և վերջինս նույն չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչպես նաև այն, որ մինչև 06.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշումը՝ Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով «Մանե Վուդ» ՍՊԸ-ի հայտը չի մերժվել, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ 06.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ «Մանե Վուդ» ՍՊԸ-ի հայտն արձանագրված հիմքով մերժելն անհիմն է և վերջինիս չի կարող նաև վերագրվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, ինչը կհանգեցներ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մանե Վուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/[illegible]-18 գրությամբ «ՄԱՆԵ ՎՈՒԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00105084/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ներկայացված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավաբանական է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷԴՈՒԱՐԴ ՄԵՐԳՅԱՆ